


ՀԻՆՉՆԱԲԹԻ, 31 ՄԱՅԻՍԻ 2018Թ.
№ 14 (472)

Մենք դեռ հազար
հոգեվարք ենք
մերժելու...

Համո Սահյան

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Կապանի կոմբինատում գործադուլ էր եւ հացադուլ

Մայիսի 25-ի ժամը 14-ից սկսած Կապանի լեռնահարստացման կոմբինատում գործադուլ է:

Աշխատանքը նախ դադարեցրել են ստորգետնյա հանքի բանվորները, որոնց ավելի ուշ միացել են ձեռնարկության մյուս օղակների աշխատողները:

Գործադուլին նախորդել էր հանքագործների մեկ շաբաթ տևած սպասումը:

Ընկերության գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովը խոստացել էր «Պոլիմետալի» դեկավարության հետ (այդ ընկերության մեջ է մտնում Կապանի կոմբինատը) քննարկել Կապանի ձեռնարկությունում ստեղծված վիճակը եւ մասնավորապես աշխատավարձը բարձրացնելու պահանջը:

Մեկ շաբաթ անց, սակայն, տնօրենը լեռնագործներին է ներկայացրել ձեռնունայն հայտարարելով, թե աշխատավարձերի վերանայում կարող է կատարել միայն 2018-ի հոկտեմբերից, այն էլ՝ հինգ տոկոսով:

Ուշկովի անլուրջ եւ չփաստարկված պատասխանն էլ պատճառ է դարձել, որ հանքի բանվորները դադարեցնեն աշխատանքն ու անժամկետ գործադուլ հայտարարեն:

Հիշեցնենք, որ Կապանի կոմբինատի գործող հանքը, ի տարբերություն մարզի հանքարդյունաբերական մյուս ձեռնարկությունների մետաղական հանքերի, ստորգետնյա է եւ ունի աշխատանքի անհամեմատ ծանր պայմաններ, նաեւ՝ ռիսկեր հանքավորների կյանքի եւ առողջության համար:

Գործադուլ հայտարարած հանքագործները պահանջում են աշխատավարձի բարձրացում 40 տոկոսով:

Գործադուլը, ըստ էության, առիթ է դարձել, որ լեռնագործները բարձրաձայն են իրենց մի քանի այլ հոգսերի մասին նույնպես:

Հանքագործներին, նախենառաջ, զայրացնում է գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովի անհոգի, իմիջիայլոց վերաբերմունքը բանվորների հոգսերի հանդեպ:

Մեկ տասնյակ միլիոն դրամից ավելի «աշխատավարձ» ստացող տնօրենը չբարեհաճեց նույնիսկ դուրս գալ իր աշխատասեյակից եւ նորմալ գրուցել մարդկանց հետ:

Հանքագործները կեղծիք են համարում թմբկահարվող ցուցանիշը, թե իբր կոմբինատում ամսական միջին աշխատավարձը 320 հազար դրամ է:

-Դա մեծ սուտ է, -մեզ բացատրում էր հանքագործներից մեկը, - ես ստորգետնյա հանքում ստանում եմ 160 հազար դրամ, իրենք՝ 10 միլիոնից ավելի կամ մի քիչ պակաս, եւ այդ երկու թվի համադրումից միջին են հորինում եւ ցուցանում, ինչը սովորական աչքակապություն է:

Ըստ հանքագործների՝ տնօրենը պարբերաբար ծառայողական մեքենա է ձեռք բերում, ամեն մի մեքենան՝ 70-80 հազար դոլարից ոչ պակաս արժույթով, բայց ասում է՝ միջոցներ չկան, երբ խոսքը հասնում է բանվորի կարիքներին:

Որքանով է բանվորների վիճակին համահունչ տնօրենի նման շվայտաբարդ պահվածքը:

Նիկոլ Փաշինյանի քայլը, որ տարիներ շարունակ սպասում էին Սյունիքում

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2018թ. մայիսի 22-ին հանդես է եկել նախաձեռնությամբ՝ ստուգելու հանրապետության մետաղական հանքավայրերը՝ այդ ուղղությամբ

տալով համապատասխան հանձնարարություն:
Դե ինչ, եթե դրանք ենք, որ ստուգումները կսկսեն Հայաստանի Հանրապետության մետաղական հանքավայրերի հսկա Բաջրանից:

1918թ. մայիսյան հերոսամարտերում հաղթանակի եւ Հայաստանի Հանրապետության հռչակման պատմական խորհուրդը

1918թ. հունվարին, օգտվելով ռազմաճակատի կազմալուծումից, թուրքական զորքերը Վեհիբ փաշայի հրամանատարությամբ խախտեցին Երզնկայի զինադադարը եւ անցան հակահարձակման: Ռուսական զորքը, Արեւմտյան Հայաստանում թողնելով ահռելի քանակությամբ զինամթերք, արագորեն սկսեց հեռանալ: Մեծ զորերի գնով գրաված հսկայածավալ Արեւմտյան Հայաստանում թուրքերի դեմ մեն-մենակ հայտնվեցին հայ կամավորները: Վերջիններս տեղ-տեղ փորձեցին դիմադրություն կազմակերպել Երզնկայում՝ Սեբաստացի Սուրաղը, Բաբերդում՝ Սեպուհը, Քղիում՝ Թուրիկյանը: 1918թ. հունվարին Կոմկասյան բանակի հրամանատարությունը Անդրանիկին շնորհեց գեներալի կոչում եւ նշանակեց ռազմաճակատի հրամանատար:

Անդրանիկը ժամանեց Ալեքսանդրապոլ, որտեղ ապարդյուն անցան կամավորներ հավաքագրելու նրա փորձերը: Ապա նա անցավ Կարս, փետրվարի 10-ին ժամանեց Երզնկա՝ փորձելով այն դարձնել ուժեղ ամրոց: Արյունալի մարտեր մղելով բազմաթիվ զաղթականների հետ՝ Սուրաղը Երզնկայից նահանջեց Դեղջան, ապա՝ Երզնկա: Անարդյունք եղան նաեւ Քղիում թուրքերին եւ քրդերին կանգնեցնելու Թուրիկյանի ջանքերը: Հայերի ռազմական անհաջողությունները պայմանավորված էին նաեւ միջազգային անբարենպաստ իրադրությամբ: Թուրքերի ճնշման տակ Անդրկովկասի վրաց եւ ադրբեջանական քաղաքական ուժերը երկրամասը Ռուսաստանից անջատելու նոր քայլ կատարեցին:



Կապանի կոմբինատում գործադուլ էր եւ հացադուլ

էջ 1 Խոսակցության առաջին առարկա է երկրաբանական-հետախուզական ծառայության (այսպես կոչված «ռազվեկայի») ոլորտում հաստատված կարգը:

-Այդտեղ աշխատողների կեսից ավելին Ռուսաստանից բերված «գաստարբայտերն են» են, ովքեր մասնագիտական կարողություններով զգալիորեն գիջում են տեղացիներին, երբեմն նույնիսկ աչքի ընկնում կուսական բնությանը, բայց տեղացի մասնագետներից հինգ-վեց անգամ ավելի աշխատավարձ են ստանում, - սասց մեր գրուցակիցներից մեկը:

Հանքագործներին մտահոգում է պահեստամասերի մատակարարման ծախսով փոխված «Դուք չեք հավատա, եթե ասենք՝ մինչև հիմա Հրաչ Ջաբրայանի ժամանակներում ձեռք բերված պահեստամասերն ենք օգտագործել, դա էլ վերջացել է, իսկ ղեկավարությունը չի հասկանում մեքենասարքավորումների պահեստամասերի նորմալ մատակարարման կարևորությունը»:

Ստորգետնյա հանքի էլեկտրիկներից մեկն էլ ուղղակի դիտորդություն արեց մեզ՝ «Դուք երբեք չեք ստորգետնյա հանք: Դուք երբեք չեք պատկերացնում, թե մեր կյանքի համար ինչ ռիսկեր է պարունակում գետնի տակ աշխատելը: Ամեն օր հանք իջնելով մեզ չի լքում միտքը, որ կարող է եւ չվերադառնա՞նք այնտեղից. քանի-քանի մարդիկ են հանքում զոհվել: Անվտանգության ոչ ապահով համակարգ, օդափոխության անմխիթար վիճակ... Եվ, այդքանից հետո, ապահովագրված չէ հողի տակ աշխատող մարդու կյանքը, իսկ Ուշկովը դա չի հասկանում կամ էլ թքած ունի հանքագործների կյանքի ու առողջության վրա»:

Եվ նման բազմաթիվ հարցեր... Ու բոլոր այդ հարցերին զուսմարվում է գլխավորը՝ ցածր աշխատավարձ, ոչ արժանապատիվ վերաբերմունք բանվորի հանդեպ, բանվորի շահերը նախկինում շատ թեքիչ պաշտպանած արհմիության փաստացի վերացում...

Երկու օր առաջ Կապանի լեռնահանքային կոմբինատում մեկնարկած գործադուլը շարունակվել է երեկ, նաեւ այսօր մայիսի 27-ին:

Փաստորեն վերջին տարիների համար աննախադեպ իրավիճակ է մարզկենտրոնի մայր ձեռնարկությունում. չի գործում հարստացուցիչ ֆաբրիկան, լեռնագործները չեն իջնում ստորգետնյա հանք, չեն գործում սպասարկող արտադրամասերը, որոնք սովորաբար աշխատում են նաեւ հանգստյան ու տոնական օրերին:

Գործադուլավորների ներակայացուցիչները, ընկերության արհկոմի նախագահ Արսեն Հայրապետյանի գլխավորությամբ, շարունակում են հանդիպում-բանակցությունները կոմբինատի գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովի հետ, ով, սակայն, նախապես հայտարարած պայմաններից նահանջելու մտադրություն չունի: Իսկ նրա պայմանները հետևյալ բովանդակությունն ունեն հուսման վերանայել հավելավճարների համակարգը, հոկտեմբերից հինգ տոկոսով բարձրացնել աշխատավարձը:

Նախապես առաջադրած պահանջներից չեն հրաժարվում նաեւ

հանքագործները:

Միաժամանակ՝ գործադուլավորները մայիսի 26-ին հավանություն են տվել «Պոլիմետալի» գլխավոր տնօրեն Վիտալի Նեսիսին ուղարկվող դիմումի տեքստին՝ ստորագրված ընկերության արհմիության նախագահի կողմից: Արսեն Հայրապետյանը դիմումով կողմերին ուղղամիտ փոխզիջումների կոչ է արել:

Սակայն Դմիտրի Ուշկովը, չսպասելով «Պոլիմետալի» գլխավոր տնօրենի պաշտոնական պատասխանին, սպառնում է կրճատել աշխատողներին. Եթե հանքագործները մայիսի 29-ին չվերադառնան աշխատատեղեր, ապա ինքը մարդկանց բացակայությունը կգնահատի իբրեւ գործալքություն եւ կձեռնարկի 200 հոգու կրճատման գործընթաց:

Գործադուլավորներն էլ իրենց հերթին են սպառնում. եթե երեք օրվա ընթացքում ընկերության ղեկավարությունը չի պահանջները չբավարարի, ապա իրենք օրակարգի գլխավոր հարցը կդարձնեն Դմիտրի Ուշկովի անհապաղ հրաժարականի պահանջը:

Դմիտրի Ուշկովը մայիսի 29-ի ժամը 10-ը գործադուլավորների համար համարել է վերջնաժամկետ՝ աշխատանքի վերադառնալու համար, այնպես ինքը գործադուլավոր հանքագործներին պաշտոնապես կծանուցի կրճատումների մասին՝ գործադուլի օրերը համարելով անհարգելի բացակայություն աշխատանքից: Եվ չի բացառվում, որ ծանուցվող հանքագործների թիվը կհասնի 200-ի:

Գործադուլավորների շարքերում, մինչդեռ, երկփեղկվածություն է առաջացել այն բանից հետո, երբ Ուշկովը աշխատանքի վերադառնալու կոչ արեց՝ զուգորդված կրճատումների սպառնալիքով:

Լեռնագործներից ոմանք գտնում են, որ պետք է դադարեցնել գործադուլը, վերադառնալ աշխատանքի եւ զուգահեռաբար շարունակել բանակցությունը ղեկավարության հետ: Մի մասն էլ պնդում է, որ պետք է գնալ մինչև վերջ եւ ստիպել ղեկավարությանը՝ կատարելու պահանջները:

Գործադուլավորների դիրքորոշման երկփեղկումն նպաստեց Ուշ-

կովի հանքագործների արհմիության հանրապետական խորհուրդը: Սակայն նրանց կոչը՝ գնալ ողջամիտ փոխզիջումների, կողմերն առայժմ չեն ընդունում:

Ստեղծված իրավիճակը փակուղային համարելով եւ ուրիշ ելք չտեսնելով՝ վեց գործադուլավոր այսօր ժամը 15-ին իջել են ստորգետնյա հանք եւ այնտեղ հացադուլ սկսել. հացադուլավորների անունները փորձում ենք ճշտել:

Տնօրենը ստորգետնյա հանքում հայտարարված հացադուլի վրա է հրավիրել ԱՆ-ի տեղակալ Կառույցի ուշադրությունը՝ փորձելով միաժամանակ պարզել, թե ինչպես են լեռնագործները հայտնվել ստորգետնյա հանքում, որտեղ ելունուտ չկար չորս օր շարունակ:

Օրվա վերջին մեզ չհաջողվեց տեղեկություններ ստանալ մոտ 300 մետր խորությամբ հանքում հացադուլի նստած մարդկանց դրության մասին:

Պարզվում է մինչդեռ, որ կապանցի լեռնագործների գործադուլի հետ կապված նաեւ իրավական կնճիռներ կան: Ըստ էության հանքագործների

լը մայիսի 28-ի կեսօրից հետո նոր զարգացումներ է ունեցել: Ձեռնարկության հինգ աշխատակից մինչև 30 տարեկան էդուարդ Հովակիմյան, Արմեն Մովսիսյան, Նարեկ Աբելյան, Արթուր Կոստանդյան, Սպարտակ Միքայելյան, Շահումյանի հանքում ժամը 13.30-ից անժամկետ հացադուլ են հայտարարել՝ իրենց պահանջը տնօրինությանը ներկայացնելու այլ ուղի չգտնելով: 15 րոպե անց նրանց է միացել Վիզել Կարդանյանը:

Ինչպես մեզ փոխանցեց հանքի հորատող Արմեն Մովսիսյանը, ում որդին եւս գործադուլի մեջ է, իրենց ձեռնարկության արհեստակցական կազմակերպության միջոցով հացադուլի մասին տեղեկացրել են կոմբինատի գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովին, նրանից հացադուլավորների համար պահանջել արտահագուստ, քանի որ քաղաքացիական հագուստով էինք հանք իջել, անվտանգության պարագաներ, հեղուկներ: Տնօրենը հատկացրել է փրկարարական ծառայության մեքենա, որով տղաներին փոխանցվել է տաք հագուստ: Հացադուլավորների մոտ, ինչպես տեղեկացնում է Արմեն Մովսիսյանը, եղել են ինքը, կոմբինատի անվտանգության տեխնիկայի ճարտարագետը, բուժքույրը: Հացադուլավորների վիճակը գնահատվում է բավարար: «Մենք տղաներին առողջություն ենք ցանկանում, ձեռնարկության ղեկավարությանը խոսեմություն, որ հանքագործների բարձրագրած խնդրին շուտափույթ լուծում տա: Բոլորս միասնական կանգնած ենք՝ սպասելով ձեռնարկության ղեկավարության պատասխան քայլին»:

Մայիսի 29-ի առավոտվանից ձեռնարկության մոտ հավաքվել էին գործադուլի դուրս եկած ձեռնարկության աշխատակիցները, քննարկում առաջիկա անելիքները: Առավոտվա դրությամբ ձեռնարկության ղեկավարության հետ հանդիպում չէր եղել: Ինչպես տեղեկացանք, հանքագործները սպասում են գլխամասային ձեռնարկությունից՝ «Պոլիմետալ» ընկերությունից ժամանող պատվիրակությանը:

Ինչպես գրել էինք մեր նախորդ հրապարակման մեջ, գործադուլի դուրս եկած հանքագործները սպասում էին գլխամասային ձեռնարկությունից՝ «Պոլիմետալ» ընկերությունից ժամանող պատվիրակությանը եւ նրա հետ հանդիպմանը, որ քննարկեն ստեղծված իրավիճակից դուրս գալու, երկփողով լուծումներ գտնելու հարցը, մասնավորապես՝ որ շարունակվում էր հանքում կոմբինատի վեց աշխատակցի հացադուլը:

Մայիսի 29-ի ժամը 17-ի սահմանում գործադուլավորների նախաձեռնող խմբի եւ «Պոլիմետալի» պատասխանատուների միջև հանդիպում տեղի ունեցավ, որ տեւեց մոտ մեկ ժամ: Դրանից հետո «Պոլիմետալ» ընկերության գլխավոր տնօրենի արտադրության գծով տեղակալ Վիտալի Սավչենկոն եւ անձնակազմի հետ տարվող աշխատանքների հարցերով տեղակալ Դմիտրի Ռազումովը ընդունեցին մարզկենտրոնի լրատվամիջոցների ներկայացուցիչներին: Ամենակարևոր հարցին, թե որքանով է ընկերությունը պատրաստ բարձրացնել ձեռնարկության աշխատակիցների աշխատավարձը, Դ.Ռազումովը պատասխանեց,

էջ 6



Մայիսի 28-ը պատմական օր է հայոց մեջ. հարյուր տարի առաջ վերականգնվեց մեր կորսված պետականությունը:

Չնայած դրան, մթնոլորտը տոնական չէր Կապանի լեռնագործների ձեռնարկությունում:

Հանքագործների գործադուլը, որ մեկնարկել էր մայիսի 25-ին, շարունակվեց նաեւ այսօր:

Միեւնույն ժամանակ ընթանում էին բանակցություններ ընկերության արհմիութեան անունից եւ գործադուլավորների միջև, որոնք որեւէ դրական արդյունքի չհանգեցրին:

Ուշկովը իր ասածն է պնդում՝ հինգ տոկոսով աշխատավարձերի բարձրացում ս.թ. հոկտեմբերից, իսկ հունիսին արտադրամասերի վնասակարության աստիճանի որոշում հատուկ աուդիտի եւ փորձաքննության միջոցով ու դրա հիման վրա վնասակարության համար տրվող վճարների վերանայում. նախկինում դա կազմում էր աշխատավարձերի 50 տոկոսը, իսկ հիմա, կախված փորձաքննության արդյունքներից, կարող է եւ նվազել:

Իրենց պահանջն են պնդում գործադուլավորները՝ 40 տոկոսով աշխատավարձերի բարձրացում:

կովի մեկ այլ հայտարարությունն էս՝ իբր գործադուլավոր հանքագործներին կրճատելուն զուգահեռ կսկսի ազատվող (թափուր) տեղերի համար նոր աշխատողների ընդունումը:

Իրավիճակի առանձնահատկությունն այն չէ միայն, որ տնօրենը զիջումների գնալու մտադրություն չունի: Հանրապետության պատկան մարմիններն էլ, ըստ երեւոյթին, աչք են փակում Կապանում տեղի ունեցող իրադարձությունների վրա:

Մարզպետարանի եւ համայնքապետարանի մասին խոսելն այս իրավիճակում ավելորդ է: Այսօր առավոտյան մի խումբ գործադուլավորներ հավաքվել են մարզպետարանի, ապա համայնքապետարանի առջև, բայց այդ հիմնարկներում որեւէ շնչավոր չեն գտել՝ իրենց խնդիրների մասին իշխանության տեղակալ մարմիններին իրագրելու համար, ուստի եւ վերադարձել են իրենց հավաքատեղի:

Ընուն է նաեւ «Պոլիմետալի» ղեկավարությունը, թեւ վերջինիս դիրքորոշումը կարելի է տեսնել Դմիտրի Ուշկովի գործողությունների մեջ:

Շատ թեքիչ ակտիվ դեր են ստանձնել ընկերության արհկոմը (նախագահ՝ Արսեն Հայրապետյան)

գործադուլն ինքնաբուխ է սկիզբ առել եւ նախապես չեն ձեռնարկվել ԴՀ աշխատանքային օրենսդրությունից բխող քայլեր, ինչն էլ արձակում է Դմիտրի Ուշկովի ձեռքերը՝ գնալու խոստացած սպառնալիքների, այդ թվում՝ աշխատողների կրճատման ճանապարհով:

Ինչեւէ, մայիսի 29-ը վճռորոշ օր է լինելու Կապանի կոմբինատում. կան գործադուլը շարունակվելու՝ նաեւ գլխավոր տնօրենի հրաժարականը պահանջելով, կամ Դմիտրի Ուշկովը սկսելու է իր սպառնալիքներն ի կատար ածելու գործընթացը:

Հանքագործների մի պատվիրակություն է այցելել Երեւան՝ մայիսի 29-ին հանդիպելու բարձր իշխանության ներկայացուցիչների հետ՝ նպատակ ունենալով Կապանում տեղի ունեցող իրադարձությունների վրա հեղափոխել նրանց ուշադրությունը: Սպասվող հանդիպումը, սակայն, առայժմ լավատեսության տեղիք չի տալիս, քանզի պետական համապատասխան կառույցներում այնքան էլ տրամադրված չեն մտնելու սեփականատիրոջ իրավասությունների սիրույթ:

Հանքագործների գործադուլ-

28 մայիսի 2018թ., տոնական միջոցառումներ Սյունիքում՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին

Կապան, Փարեգին Նժդեհի հրապարակ



Գորիս, Գրիգոր Տաթևազու հրապարակ




Հովհաննես Թումանյան

Մեր սերունդը էն սերունդն է, որ դեռ երեկ ազատ Հայաստան էր երագում:

Ազատ Հայաստան էին երագում ռուսահայը, տաճկահայը, պարսկահայը եւ բոլոր հեռավոր գաղութները: Ազատ Հայաստան էին երագում հայ ժողովրդի բոլոր խավերը, առանց սեռի ու հասակի խտրության: Ի՞նչ ասես, որ չէր տա գրեթե ամեն մի հայ, միայն թե աչքով տեսներ ազատ Հայաստանը: Ու հանկարծ...

Արդեն իրականություն է երեկվա մեծ երազը. ազատ է Հայաստանը, ամբողջ աշխարհի կողմից ճանաչված ինքնուրույն հանրապետություն է նա, իր եռագույն դրոշակով կանգնած է մյուս պետությունների շարքում:



Սարգարապարում էր նաեւ Ալսեւ Բակունցը

1917 թվականին թուրքական ճակատում տեղի էին ունենում ծանր կռիվներ: Մուգ կապույտ աչքերով թախծոտ պատանին, որի հայացքի եւ շարժման մեջ կար «ինչ-որ էլեգիական բան», աղետի օրերին դրսևորում է ոգու կրողը: 1917թ. ճեմարանական ուսանողների հետ մեկնում է Երզրումի ճակատ՝ որպես շարքային: Ամբողջ մի տարի նա մասնակցում է կռիվներին եւ ճաշակուն մահացի բոլոր դառնությունները: Սարիղամիշ, Կարս, Սուրմալու, կորուստների այս ուղին անցնելի հետք է թողնում նրբագագ գինվորի վրա: Վերջապես, 1918թ. մայիսին պատանի զինվորը մասնակցում է Սարգարապատի հերոսական ճակատամարտին: Չարենցի պես նա էլ դառնում է հինավուրց



Երկրի ողբերգության ականատեսը եւ մաքառումների մասնակիցը:
ՀՐ.ԹԱՄԱՐԱՅԱՆ
«Սովետահայ գրականության պատմություն», էջ 430

Սարգարապարի հերոսամարտին մասնակցած հրամանատարներ եւ սպաներ



Մովսես Սիլիկյան



Դանիել Բեկ-Փիրումյան



Ալեքսանդր Վեքիլյան

Մովսես Սիլիկյան - գեներալ-լեյտենանտ, դիվիզիայի հրամանատար
 Դանիել Բեկ-Փիրումյան - գնդապետ, ճակատի հրամանատար
 Ալեքսանդր Վեքիլյան - գնդապետ, ճակատի շտաբի պետ
 Պավել Բեկ-Փիրումյան - գնդապետ, 5-րդ հրաձիգ գնդի հրամանատար
 Սիքայել Արեշյան - գեներալ-մայոր, դարաքիլիսյան գնդի հրամանատար
 Ալեքսեյ Պերեկրյոստով - գնդապետ, պարտիզանական գնդի հրամանատար
 Աբրահամ Դուրխանյան - գնդապետ, 6-րդ հրաձիգ գնդի հրամանատար
 Իվան Սիլին - սահմանապահ զունարտակի հրամանատար
 Հովհաննես Բաղդամյան - հեծելազորի կրտսեր սպա, հետագայում խորհրդային Միության մարշալ
 Ուսուբ-բեյ եւ Ջհանգիր աղա - եզդիական զունարտակի հրամանատարներ
 Պանդուխտ խմբապետ - հայկական անկանոն հեծելազորի հրամանատար
 Խորեն Իգիթյանյան - գնդապետ, թմրանոթային մարտկոցի հրամանատար
 Սակեյարի - կապիտան, թմրանոթային մարտկոցի հրամանատար
 Սերգո Աթանեսյան - կապիտան, թմրանոթային մարտկոցի հրամանատար
 Կլիչ - պորուչիկ, թմրանոթային մարտկոցի հրամանատար
 Աղասի Հովհաննիսյան - զունարտակի հրամանատար
 Արտաշես Օհանջանյան - զունարտակի հրամանատար
 Կարապետ Սարգսյան - զունարտակի հրամանատար
 Տրդատ Հովակիմյան - կապիտան, գնդացրային վաշտի հրամանատար
 Թեմիկ Առաքելյան - փոխպորուչիկ, գնդացրային վաշտի հրամանատարի տեղակալ
 Ստեփան Թովիշյան - պորուչիկ, վաշտի հրամանատար
 Մանասեր Մանասերյան - փոխպորուչիկ, վաշտի հրամանատար
 Երվանդ Տեր-Սիմոնյան - փոխպորուչիկ, վաշտի հրամանատար
 Ալեքսանդր Միրզոյան - պորուչիկ, վաշտի հրամանատար
 Արիստակես Մուրադխանյան - պորուչիկ, վաշտի հրամանատար
 Սիքայել Մելիք-Օհանջանյան - պորուչիկ, գնդի համարգ եւ տասնյակ այլ անուններ



Պավել Բեկ-Փիրումյան



Սիքայել Արեշյան



Հովհաննես Բաղդամյան

1918թ. մայիսյան հերոսամարտերում հաղթանակի եւ Հայաստանի Հանրապետության հռչակման պարմական խորհուրդը



ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
 պ.գ.դ., 77 ԳԱՍ պատմության ինստիտուտի տնօրեն

էջ 1 1918թ. փետրվարի 10-ին Թիֆլիսում գումարվեց Անդրկովկասյան սեյմը, ուր ներկայացված էին 32 մենչեիկներ, 30 մուսավաթականներ, 27 դաշնակցականներ եւ տասնյակ այլ կուսակցությունների ներկայացուցիչներ: Սեյմի նախագահ ընտրվեց Չխեիծեն: Սեյմը դարձավ Անդրկովկասի դաշնային հանրապետության իշխանության նոր մարմին՝ փոխարինելով կոմի-

Այս ամենին գումարվեց Բրեստ-Լիտովսկում 1918թ. մարտի 3-ին խորհրդային Ռուսաստանի եւ գերմանաթուրքական բլոկի միջև կնքված չարաբաստիկ պայմանագիրը, որով բոլշևիկյան կառավարությունը հրաժարվում էր Արեւմտյան Ուկրաինայից, Արեւմտյան Բելոռուսիայից եւ Մերձբալթիկայից՝ հօգուտ Գերմանիայի եւ Արեւմտյան Հայաստանից՝ հօգուտ Թուրքիայի: Ավելին, փաստորեն թուրքերին էր տրվում նաեւ Կարսի մարզը, որը 1878 թվականից Ռուսաստանի կազմում էր: Անդրկովկասյան սեյմը չճանաչեց Բրեստ-Լիտովսկի թալանչիական պայմանագիրը եւ 1918թ. մարտին Տրապիզոնում առանձին բանակցություններ սկսեց թուրքերի հետ: Սեյմի պատվիրակության (նախագահ՝ Ա.Չխեիծեն) 12 անդամներից 7-ը մահմեդականներ էին: Ուստի շուտով դրսևորվեց վերջիններիս թուրքամետ դիրքորոշումը: Աղբյուրներից հայտնի էր, որ թուրքերը ընդառաջ գնալով իրենց թուրք եղբայրների թալանչիական պահանջներին, գտնում էին, որ պետք է ճանաչել Բրեստ-Լիտովսկու պայմանագրով նախատեսված հողերի անցումը Թուրքիային: Վրաց պատվիրակները թեեւ դեմ էին Արեւմտյան Հայաստանի եւ Տրապիզոնի անցմանը Թուրքիային, սակայն իրականում ոչ մի լուրջ քայլ չէին կատարում թուրքերի առաջ-

խաղացումը կասեցնելու ուղղությամբ: Պատահական չէ, որ վրացի գեներալ Օդիշելիձեի դավաճանության պատճառով եւ Չխեիծենի հրամանով 1918թ. ապրիլի 11-12-ին, գրեթե առանց կռվի, թուրքերին հանձնվեց բավականին լավ ամրացած Կարսի բերդը: Բանակցությունները Տրապիզոնում արդյունք չտվեցին, եւ Սեյմի պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս: Ստեղծված իրադրության մեջ պարզ էր դառնում, որ թուրքերը չեն բավարարվելու Բրեստ-Լիտովսկով նախատեսված հողերի բռնագրավմամբ եւ ներխուժելու են նաեւ բուն Արեւելյան Հայաստան այն գրավելու եւ իրականացնելու հայ բնակչության ոչնչացումը: Այդ ժամանակ Երեւանում հայրենիքի պաշտպանության գործն իր վրա վերցրեց 1915թ. Վանի հերոսամարտի ղեկավար Արամ Մանուկյանը, որը 1917թ. դեկտեմբերի վերջից գլխավորում էր Երեւանի ազգային խորհուրդը: Շուտով Արամը ստացավ դիկտատորի լայն լիազորություններ՝ իր ձեռքը կենտրոնացնելով Արեւելյան Հայաստանի ռազմական եւ վարչական իշխանությունը: Նա Երեւան հրավիրեց մի շարք նշանավոր զինվորականների՝ Մ.Սիլիկյանին, Գ. Բեկ-Փիրումյանին, Դրոյին, Ն.Ղուրդանյանին եւ այլոց: Արամը կարողացավ կարգ ու կանոն հաստատել Երեւանի նահանգում, սանձել ավազակային

խմբերը, կազմակերպել զինական ուժեր եւ ուղարկել ռազմաճակատ: Իրադրությունը Անդրկովկասում շարունակում էր ավելի վտանգավոր դառնալ: Թուրքերի ճնշման տակ սեյմը 1918թ. ապրիլի 9(22)-ին վրաց մենչեիկների եւ աղբյուրների մուսավաթականների ջանքերով ընդունեց որոշում՝ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու մասին: Սեյմի հայ պատվիրակությունը, որ դեմ էր այդ որոշմանը, մնաց փոքրամասնություն: Երկրամասի անջատումը Ռուսաստանից ավելի անկաշկանդ դարձրեց թուրքերի նվաճողական ձեռնարկումները: Անցնելով Ախուրյան գետը՝ թուրքական հորդանքերը մայիսի 15-ին ներխուժեցին Ալեքսանդրապոլ: Այստեղ եւս բավականաչափ ուժեր կային թշնամուն դիմադրելու համար: Սակայն սեյմի ղեկավարությունը կարգադրեց քաղաքը հանձնել թուրքերին: Ալեքսանդրապոլի գավթումից հետո թուրքական «Կարս» զորամիավորումը 4 ուղղություններով սկսեց առաջանալ Արեւելյան Հայաստանի խորքերը: Թուրքերի 3-րդ եւ 4-րդ բանակային զորախմբերը հրաման էին ստացել Արարատյան դաշտով մտնել Երեւան: Մայիսի 21-ին այդ զորախմբերը գրավեցին Սարգարապատ գյուղը ու կայարանը:



Կաթողիկոս Գեորգ Ե Տփղիսեցու կարգադրությամբ այդ օրերին Արարապյան երկրի բոլոր վանքերի ու եկեղեցիների զանգերը համազգային փառանքի հայտարարեցին



Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որ բովանդակ հայրության բախտի տնօրենն էր փաստորեն, արդեն հաշտվել էր անձնատվական այս որոշման հետ, հույսը դրել էր թուրք կառավարողների ողորմածության վրա և սպասում էր ազգի օրհասին:

Սակայն բարեբախտություն էր, որ այս պայմաններում, ինքնազինաթափման ու հոգեմաշ խուճապի այս մթնոլորտում, կային մարդիկ, որոնք հավատում էին հրաշքին:

Պահպանվել են ճակատագրական այն օրերի վավերագրերը: Գրավոր աղբյուրները, հիշատակարաններն ու ակամատեսների վկայությունները ներկայացնում են համազգային ողբերգությամբ մակարդված այն մթնոլորտը, որի մեջ վեհորեն բարձրանում են հերոսները:

Երեւանյան ռազմաճակատի հրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանը, Հայոց սպարապետ Նազարբեկյանի ու Թիֆլիսի ազգային խորհրդի համաձայնագրով, էջմիածնում ներկայացել էր Ամենայն հայոց կաթողիկոսին և առաջարկում էր ապահովության համար հեռանալ Մայր աթոռից: Ապահովության համար, որովհետև որոշված էր Երեւանն ու էջմիածինը հանձնել թուրքերին և հաշտություն կնքել, հակառակ դեպքում՝ ապավինել Կոտայքի ու Սեւանի բարձունքներին և պաշտպանվել վերջին ուժերով:

Եվ այն ժամանակ ծերունագար կաթողիկոս Գեորգ Ե Տփղիսեցին ընդվզեց այդ անհեռատես ու անհեռանկար որոշման դեմ, կարգադրեց Արարապյան երկրի բոլոր վանքերի ու եկեղեցիների զանգերից համազգային տազնապ ազդարարել: Նա Մայր տաճարի բեմից այսպես խոսեց ժողովրդի հետ.

«Ազգ հայոց, թուրքը՝ մեր բանական հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության: Գալիս է Արարապյան երկրի վրա: Թուրքը կոտորած ու ավեր փռելով գալիս է, և մեր զորապետներն էլ ուրիշ ելք չեն գտնում այդ աղետից, քան հայոց հայրապետին փախուստի մղելը: Նրանք Ամենայն հայոց կաթողիկոսին առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր աթոռ էջմիածինը, մեր սրբարանները, հայ ժողովուրդը, հայրենի երկրի վերջին կտորը: Առաջարկում են լքել այս բոլորը և սեփական կյանքը փրկել Բյուրականում կամ ուրիշ անմատչելի որևէ լեռնածեղի վրա: Ո՛չ և ո՛չ, հազար անգամ ոչ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդված Մայր աթոռը: Ես չեմ հեռանա հայոց առաքելական եկեղեցու օջախից: Եթե հայոց զինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը, չեն կարողանա թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի զորու չեն լինի փրկելու մեր սրբությունները, ապա թող ես նահատակվեմ հենց այստե՛ղ, շեմի վրա՝ Մայր աթոռի, որի գահակալի պատիվը ունեն մեր սուրբ նախնիների արդար բարեխոսությամբ և Աստուծո ողորմածությամբ:

Դահլիճում գոհունակության տնքոցը հորձանք տվեց, ժայթքեց դուրս, որպեսզի տարածվի տաճարի բակում ծփացող բազմության վրա և այնտեղից էլ հորդա Վաղարշապատի փողոցները, զեն ավելի հեռու, սիմվի կուչ եկած Հայաստանում ու նրա սահմաններից դուրս:

Թուրքը չի կշտացել մեր ժողովրդի արեւմտյան կեսով, հիմա էլ այս մի կեսի վրա է եկել անհագուրդ ու մոլեգնած, իր խոսքն այսպես շարունակեց Ամենայն հայոց հայրապետը: Եվ եթե այստեղ էլ հաղթեց, դա կլինի ստույգ վերջը մեր ազգային գոյության: Մի՞ թե մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օջախի կրակը, մեր հավատի ջահը, մեր ազգային գոյի հիմքերը: Իսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչը՝ չընդունենք պատվով ու քաջությամբ և ոչ թե ողորմելի գեռուցի պես ոսոխի առաջ սողալով: Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջության օրինակներով, ներկված են նահատակների արյամբ: Դրանով չի սպառվել մեր արյունը, և չի կորսվել քաջությունը մեր շարքերից: Դարեր շարունակ հայոց ազգն այսպես է ապրել՝ իր ինքնության համար պայքարելով, իր վաղվա համար այսօր մեռնելով: Եվ որովհետև ով զաղափարի հետ է մեռնում, մեռնում է որպես հատիկը ցորյանի, ապա հատիկի մահով մոր կյանքը են ծնվում վաղ թե ուշ: Դրա համար է, որ զանգվածային մահերով ու կոտորածներով հարուստ մեր կեն-



սագրությունը չի ունեցել և երբեք էլ չպետք է ունենա վերջին վերջակետ: Ուրեմն էլ ինչը՝ դավենք արելու և գոյատևելու մեր ազգային կերպին: Ինչը՝ ազգովին չբարձրանանք թշնամու դեմ, որ գալիս է անդրադարձյալ իր թեթև հաջողություններով հղիացած և մեր արյան վերջին կաթիլին ծարավի... Պատրա՛ստ ենք ելնելու, վեհափառ տեր, գոչեցին դահլիճի տարբեր կողմերից:

Եվ այս ահեղագոչ ծայրերին միացան ու դահլիճը միաձայն, միահամուռ պայթեց.

Պատրա՛ստ ենք:

Կաթողիկոսը դրան էլ սպասում էր. շունչ առավ մի պահ և, հայացքը ծփացող ամբոխի վրա, աջով աղանձաղազող լանջախաչը բռնած, երանությամբ շարունակեց.

Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները: Ես համոզված եմ նաեւ, որ ազգն իմ հայրոց՝ անարգ թշնամուն դեռեւս չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պետք է լինի հաղթական...

Պետք է լինի հաղթական... հաղթական, արծազանքեց դահլիճը: Եվ արծազանքն այդ թնդաջ Մայր տաճարի կամարների տակ, ելավ նրա դռներով ու լուսամուտներով, տարածվեց-լցվեց Արարապյան աշխարհը:

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱՐՔԱՆ «Ձրուցարան»



Վտանգը կախվեց էջմիածնի ու Երեւանի վրա, որտեղ բազմահազար արեւելահայերի հետ ծվարել էին հայրուր հազարավոր արեւմտահայ զորքականներ: Երեւանի անկումը կնշանակեր թուրքերի ձեռնարկած 1915թ. ցեղասպանության ավարտ, հայ ժողովրդի իսպառ ոչնչացում: Այս օրհասական ժամին խոսեց հայ ժողովրդի ինքնապաշտպանական բնագոյը: Վերջ տրվեցին միջկուսակցական տարածայնություններին, համախմբվեցին բոլոր ուժերը: Արամ Մանուկյանը գեներալ Թովմաս Նազարբեկյանին լիազորեց ստանձնելու հայկական զորքերի հրամանատարությունը: Վերջինս էլ գեներալ Մովսես Սիլիկյանին նշանակեց Երեւանյան ուղղությունը պաշտպանող զորաջոկատի հրամանատար: Սարդարապատի շրջանում ռազմական գործողությունների անմիջական ղեկավար դարձավ արցախցի գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը: Վերջինիս ազգական Պողոս Բեկ-Փիրումյանը գլխավորեց կամավորներից կազմված «Մահապարտների գունդը»: Սարդարապատում հայկական զորքերի դեմ դուրս բերվեց թուրքական 15 հազարանոց զորաբանակ՝ Շեքի փաշայի հրամանատարությամբ: Մայիսի 22-ին հայերն անցան հակահարձակման և հուժկու հարվածով ոչնչացրին Դամշլու (Եղեգնուտ) գյուղի շրջանում կենտրոնացած թուրքական ուժերը՝ ազատագրելով մեկ օր առաջ գրավված Սարդարապատը: Թուրքերը նահանջեցին և

նոր դիրքեր բռնեցին Արաքս կայարանի շրջանում: Այս հաղթանակը ոգեւորեց հայկական ուժերին: Տարբեր տեղերից սկսեցին ժամանել նորանոր ջոկատներ: Մարտիկների առջև ելույթ ունեցավ Ս.Սիլիկյանը՝ հիշեցնելով Ավարայրի հերոսներին, և որ նահանջել չի կարելի, քանզի թիկունքում Սուրբ էջմիածինն է: Համանման ճառ արտասանեց նաեւ Թ.Նազարբեկյանը. «Մեր ապագան մեր ձեռքին է, կամ կհասնենք նրան պայքարով, կամ երբեք մենք եւ մեր սերունդները չեն տեսնի այն»:

Մինչեւ մայիսի 27-ը տեսած արյունալի մարտերից հետո հայկական ուժերը թշնամուն ետ շարտեցին մինչեւ Արաքս կայարանը: Ապարանի ուղղությամբ հայկական ուժերին շրջանցելու և թեւերից հարվածելու թուրքերի 9-րդ դիվիզիայի ջանքերն անցան ապարդյուն: Դա տեղի ունեցավ շնորհիվ Բաշ-Ապարանի ուղղությամբ հայկական զորքերի հաջող գործողությունների: Բաշ-Ապարանի շրջանում աչքի ընկավ Դրաստանատ կամայանը: Հերոսաբար գոհվեց հայտնի կամավորական Ջեմլյակը: Մայիսի 27-29-ի ընթացքում Բաշ-Ապարանի տակ թշնամին գլխովին ջախջախվեց և ետ շարտվեց: Սարդարապատի և Բաշ-Ապարանի շրջանում կրած պարտությունների վրեժը թուրքերը փորձեցին հանել Սեծ Ղարաքիլիսայում: Այս ուղղությամբ թուրքերը ձգտում էին ճեղքել դիմադրությունը և դուրս գալ դեպի Թիֆլիս: Սեծ Ղարաքիլիսայի մարտերում մայիսի 24-28-ին աչքի ընկան գնդապետներ Բեյ Մամիկոնյանը, Ն.Դորդնյանը, Գ. Տժդեղը: Միայն մայիսի 30-ին մեծ

կորուստների գնով թշնամին կարողացավ ներխուժել Ղարաքիլիսա: Այնուհանդերձ մայիսյան թշնամու մարտերն ավարտվեցին թշնամու ջախջախմամբ: Տալով 3500 զոհ՝ թուրքերը նահանջեցին դեպի Ալեքսանդրապոլ: Մայիսյան հերոսամարտերում, որոնք հայոց պատմության ամենապայծառ էջերից են և հայ ժողովրդի գոյատևման հզորագույն գրավականը, աչքի ընկան նաեւ հեծյալ ջոկատի հրամանատար Հովհ. Բաղդասյանը, կապիտան Դուրխանյանը, գրող Ա.Բակունցը, լեզվաբան Գր. Ղափանցյանը, ռուս զինվորականներ՝ Պերկերեստով, Սիլինը, հույն Սակելարին, բազմաթիվ հոգեւորականներ՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի գլխավորությամբ և ուրիշներ: Մայիսի 26-ին սեյմի վրաց մենչեիկյան խմբակցությունը հանդես եկավ սեյմը լուծարելու և վրացական անկախ պետություն հռչակելու հայտարարությամբ: Սեյմը ցրելու առաջարկությունը պաշտպանեցին մուսավաթականները, որոնք էլ մայիսի 27-ին հռչակեցին իրենց պետականության ստեղծումը Գյանջա (Գանձակ) մայրաքաղաքով (Բաքուն այդ ժամանակ գտնվում էր սովետների ձեռքին՝ Սո.Շահումյանի գլխավորությամբ): Սեյմի փլուզումից վերջնականապես պարզ դարձավ, որ հայերը մենմենակ են մնում թուրքական ագրեսիայի առջև: Վրացիները ստացան Գերմանիայի, իսկ աղբյուրներից՝ Թուրքիայի աջակցությունը: Սեյմի հայ պատվիրակները բողոք ներկայացրեցին Վրաստանի նուրակազմ կառավարության նախա-

գահ Նոյ ժողովա՛հային: Վերջինս ցնցիկորեն պատասխանեց. «Դուք՝ հայերը, խեղդվում եք, մենք պարտավոր չենք ձեզ հետ խեղդվել»:

Մայիսի 28-ին Ազգային խորհուրդն ընդունեց որոշում անկախ պետություն ստեղծելու մասին: Ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը հրապարակեց Նիկոլ Աղբալյանի ձեռքով գրված Հայաստանի անկախության հռչակագիրը, որը տպագրվեց մայիսի 30-ին: Նրանում մասնավորապես ասվում էր. «Ի նկատի ունենալով, որ Վրաստանի և Աղբեջանի անկախության հռչակումով լուծարվում է Անդրկովկասյան դաշնակցությունը, Հայոց ազգային խորհուրդը ժամանակավորապես իր վրա է վերցնում կառավարման ֆունկցիաները հայկական զավառների նկատմամբ»: Հունիսի 1-ին նոր հայտարարությամբ Ազգային խորհուրդը իրեն հռչակում էր հայկական բոլոր հողերի միակ իշխանություն: Այսպես՝ 1045թ. մայր հայրենիքում և 1375թ. Կիլիկիայում պետականությունը կորցնելուց հետո հայ ժողովուրդը վերականգնեց իր անկախությունը: Նորաստեղծ պետականությունը փրկելու համար անհրաժեշտ էր միջպետական հարաբերություններ հաստատել դարավոր թշնամու՝ Թուրքիայի հետ: Այդ նպատակով, հետևելով Անդրկովկասյան հարեւան երկու նորաստեղծ պետությունների օրինակին, ժամանակավոր կառավարության ֆունկցիաներ իրականացնող Ազգային խորհուրդն իր պատվիրակությունն ուղարկեց Բաքուն, որտեղ ընթանում էին մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից

անդրկովկասյան հանրապետությունների բանակցությունները: Հայկական կողմը ներկայացրեցին Ալ.Խատիսյանը և Հովհ.Քաջագունին: Սկզբում թուրքական պատվիրակությունը չէր ուզում բանակցել հայերի հետ: Սակայն, հավանաբար տեղեկանալով Սարդարապատում կրած իրենց զորքերի անհաջողություններին, հաշվի նստեց նաեւ հայերի հետ: Հունիսի 4-ին Բաքումում հաշտություն կնքվեց Թուրքիայի և առանձին-առանձին անդրկովկասյան հանրապետությունների միջև: Թուրքիան ճանաչում էր Հայաստանի Հանրապետության անկախությունը: Սակայն հայերին այդ անկախությունը տրվում էր չափազանց թանկ գնով: Բաթումի պայմանագիրն ավելի ծանր էր, քան Բրեստ-Լիտովսկի հաշտությունը: Հայաստանը հրաժարվում էր ոչ միայն Արեւմտյան Հայաստանից ու Կարսի մարզից, այլև Արեւելյան Հայաստանի մի շարք շրջաններից՝ Ալեքսանդրապոլի և Համամլուի (Սպիտակ) գավառներից, Երեւանի ու էջմիածնի գավառների մի մասից, Շարուր-Ղարալազյազի 1/5որդից, Ալեքսանդրապոլ-Նախիջեւան երկաթուղուց (բացի Երեւան-Մասիս 6 վերստանոց հատվածից): Հայաստանում տեղակայվելու էին թուրքական կայազորներ: Թուրքերն իրավունք էին ստանում Հայաստանով գործ տեղափոխել Բաքու, որտեղից պետք է դուրս բերվեին Կոմունան պաշտպանող հայկական ուժերը: Եվ վերջապես Հայաստանը պարտավորվում էր իր տարածքում զինաթափել հակաթուրքական ավազակային զորաջոկատները: **Էջ 8**

Մարզպետը պետական հիմնադրամից պարտքով 300 մլն դրամ է հարկացրել իր ղեկավարած մյուս՝ մասնավոր հիմնադրամին. վերադարձվել է արդյոք այդ գումարը

Նամակ 33 ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանին



Հարգելի պարոն նախարար

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. դեկտեմբերի 15-ի N1299-Ն որոշմամբ ստեղծվել է Սյունիքի մարզի զարգացման և ներդրումների հիմնադրամ:

Սահմանվել է, որ Սյունիքի մարզի զարգացման և ներդրումների հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը ՀՀ Սյունիքի մարզպետարանն է:

Ըստ հիմնադրամի կանոնադրության՝ հիմնադրամի կառավարման բարձրագույնն է հսկողություն իրականացնող մարմինը՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է:

Խորհուրդը բաղկացած է երեք անդամից. ի պաշտոնե խորհրդի նախագահը Սյունիքի մարզպետն է (այս դեպքում՝ Վահե Հակոբյանը): Խորհրդի երկրորդ անդամը նշանակվում է Սյունիքի մարզպետի կողմից (այս դեպքում՝ Վահե Հակոբյանի կողմից): Խորհրդի երրորդ անդամը նշանակվում է «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի կողմից՝ Սյունիքի մարզպետի երաշխավորությամբ (այս դեպքում՝ Վահե Հակոբյանի երաշխավորությամբ):

Այսպիսով՝ ունենք Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող հիմնադրամ (Սյունիքի զարգացման և ներդրումների հիմնադրամ), որի միանձնյա ղեկավարը Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանն է...

Վահե Հակոբյանի գլխավորությամբ, որպես հոգաբարձուների խորհրդի նախագահ, կա մեկ այլ հիմնադրամ եւս՝ «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը:

Արդյունքում՝ ունենք երկու հիմնադրամ, երկուսի ղեկավարն էլ Վահե Հակոբյան մարզպետն է, բայց դրանցից մեկը

Հայաստան պետության սեփականությունն է, մյուսը՝ Քաջարանի կոմբինատի բաժնետերերի սեփականությունը:

...2016թ. դեկտեմբերի 27-ին Կապանում տեղի ունեցած ինչ-որ մի քննարկման ընթացքում (տեսագրությունը կա) Վահե Հակոբյանը հայտարարել է, թե Սյունիքի զարգացման և ներդրումների հոգաբարձու հիմնադրամին փոխանցված միջոցներն ուղղվել են «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամին՝ պարտքով, վերադարձվելու պայմանով:

Իսկ ինչ, ոչ պակաս) մոտ 300 մլն դրամի մասին է:

Այդ Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող հիմնադրամի միջոցներից (առանց Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման) Վահե Հակոբյանը գումար է հատկացրել իր գլխավորած մեկ այլ մասնավոր հիմնադրամին:

Հարց առաջին. Հայաստանի Հանրապետության ո՞ր օրենքով է (իրավական ի՞նչ հիմքով է) թույլատրվում պետական միջոցները պարտքով (փոխատվությամբ) տրամադրել մասնավոր մի հիմնադրամի, մասնավոր որ երկու հիմնադրամի ղեկավարը նույն մարդն է, այն էլ պետական բարձրաստիճան պաշտոնյա՝ Սյունիքի մարզպետը:

Ինդիքը ձեւակերպելու ուղի չկա. անհրաժեշտություն է առաջացել քրեաիրավական գնահատական տալու մարզպետի և մասնավոր առեւտրային ընկերության ֆինանսական միջոցները տնօրինող հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի գործառնությունները համատեղելու ընթացքում իրականացված ֆինանսական գործարքի օրինակաբանությանը:

Հարց երկրորդ. Ի՞նչ հետեւանքներ է ունեցել երկու հիմնադրամի միջև կատարված ֆինանսական այդ գործարքը, ի՞նչ չափի գույքային վնաս է պատճառվել պետությանը:

Իմիջիայլուց, նշված խորհրդակցության ընթացքում (27 դեկտեմբերի 2016թ.), նորաստեղծ հիմնադրամի մասին խոսելուց հետո, մարզպետը դրվատանքով է արտահայտվել իր ընտանիքի սեփականություն հանդիսացող, իր տիկնոջ՝ Էլիզաբեթի ղեկավարությամբ գործող «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության մասին:

Խորհրդակցության մասնակիցները տպավորություն են ստացել, որ Սյունիքի զարգացման և ներդրումների հիմնադրամից մոտ 300 մլն դրամը՝ փոխանցված «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամին՝ ուղղվել է մարզպետի ընտանիքին պատկանող, մարզպետի տիկնոջ՝ Էլիզաբեթի կողմից ղեկավարվող «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպությանը:

Եվ ուրեմն՝ հարց երրորդ. «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամն ո՞ւն է ուղղել պետական հիմնադրամից ստացված գումարը:

Անշուշտ, որեւէ մեկը չի կարող հակարարծել, թե վերջինս մասնավոր հիմնադրամ է, եւ մենք չենք կարող խորանալ նրա ֆինանսական գործողությունների մեջ, քանի որ խոսքը Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող հիմնադրամի գումարների մասին է:

Հարց չորրորդ՝ ի վերջո ի՞նչ նպատակով է ծախսվել այդ գումարը:

Կա եւ գլխավոր հարցը, ինչի համար էլ խոսքն այսօր ուղղում ենք Հայաստանի Հանրապետության ֆինանսների հարգելի նախարարին:

Այդ 300 մլն դրամը, որ Վահե իր գլխավորած պետական հիմնադրամից հատկացրել է իր ղեկավարած մյուս՝ մասնավոր հիմնադրամին, վերադարձվել է պետությանը, թե՞ ոչ, չէ՞ որ այն տրվել էր պարտքով՝ վերադարձնելու պայմանով:

Ի դեպ, այդ մասին մասին 2017թ. հուլիսի վերջին ՀՀ գլխավոր դատախազին տեղյակ է պահել բնապահպան Արթուր Գրիգորյանը՝ ներկայացնելով հաղորդում հանցագործության մասին:

Դատախազությունը հրաժարվել է գործի պատշաճ քննությունից:

Իրավապաշտպանները եւ մասնավորապես «Հյուսիս-Ռայթս Հուս» իրավապաշտպան կազմակերպությունը դատապարտել են ՀՀ գլխավոր դատախազության պահվածքը:

Հետագայում Արթուր Գրիգորյանի դեմ քաղաքացիական գործով Վահե Հակոբյանը, ով էլ, սակայն, հրաժարվել է իրաժարվում է մասնակցել դատական նիստերին:

Դատախազության պահվածքն այլ տիրույթի հարց է եւ սույն դիմումի խնդիրներից դուրս է: Ավելի ճիշտ՝ մենք պատրաստվում ենք հրապարակային հարց ուղղել Հայաստանի Հանրապետության դատախազությանը՝ պարզաբանելու, թե ի՞նչ հիմքով ընթացք չի տրվել պետական սեփականություն հանդիսացող հիմնադրամից մասնավոր հիմնադրամին գումար փոխանցելու իրողությանը:

Սույն դիմումով այլ հարց ենք ուզում պարզել՝ հանրային պետական միջոց հանդիսացող 300 մլն դրամը վերադարձվել է Սյունիքի զարգացման և ներդրումների հիմնադրամ, թե՞ ոչ:

Հարգելի պարոն Ջանջուղազյան

Միզուց եւ սույն նամակը գրելու անհրաժեշտություն չլինե, եթե «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համահունչ, նշված երկու հիմնադրամը սահմանված կարգով հանրությանը ներկայացրած լինեին ֆինանսական հաշվետվություն իրենց գործունեության մասին:

Ուստի, վերը շարադրվածից գատ, խնդրում ենք Ձեր միջամտությունը՝ հրապարակելու նշված երկու հիմնադրամի 2016 եւ 2017 թվականների ֆինանսական հաշվետվությունը: Միաժամանակ՝ բազմաթիվ սյունեցիներ խնդրում են առանձին տեղեկատվություն տալ այն մասին, թե Սյունիքի զարգացման և ներդրումների հիմնադրամը որքա՞ն գումար է հատկացրել (եւ ինչ նպատակով) Կապան քաղաքի N1 հիմնական դպրոցին:

Հավաստեցեք, այդ հարցերը հետաքրքրում են շատ թե քիչ արժանապատվություն ունեցող սյունեցիներին, քանզի Սյունիքի զարգացման և ներդրումների հիմնադրամը ստեղծվել է բացառապես մեկ նպատակով՝ աջակցել Սյունիքի մարզի, տարածաշրջանի բնակիչների առջև ծառայած խնդիրների աստիճանական լուծմանը, մինչդեռ...

Եվ, ի վերջո, խնդրո առարկա ֆինանսական գործարքը, ինչպես եւ Վահե Հակոբյանի հակապետական գործողության բազմաթիվ փաստերը թույլ են տալիս ենթադրելու, որ հիմնադրամի գործունեության ընթացքում կարող էին տեղ գտնել նմանատիպ այլ երեւույթներ եւս:

Հարգանքով՝
Սամվել Ալեքսանյան
21 մայիս 2018թ.

Կապանի կոմբինատում գործադուլ էր եւ հացադուլ

Էջ 2 րո տասը տոկոսով՝ բոլոր աշխատակիցների համար՝ ըստ հաստիքացուցակի: Ինչ վերաբերում է աշխատավարձի համակարգի վերանայմանը, փոփոխմանը, պարզեւավճարների չափորոշիչների որոշմանը, ապա դա կարվի աշխատանքի ընթացքում՝ նախաձեռնող խմբի հետ, պայմանով, որ մարդիկ դուրս գան աշխատանքի: Մասնավոր, քանի դեռ շարունակվում է հացադուլը համքում, հնարավոր չի լինի վերսկսել աշխատանքը: Դա պայմանավորված է տեխնոլոգիական պրոցեսներով եւ արտադրության անվտանգությամբ:

Նախաձեռնող խմբի բարձրացրած հարցերը բանախոսը երկու մասի բաժանեց՝ արագ լուծվող եւ հարցեր, որոնց հանգուցալուծումը ժամանակ է պահանջում, որովհետեւ

տեւ որոշակի միջոցառումներ են անհրաժեշտ կատարել դրանց իրականացման ուղղությամբ: Օրինակ՝ արտադրամասի վնասակար լինելու չափը որոշելը: Եվ մասնավորապես նշեց, որ որոշ հարցերի լուծման ուղիներ չեն մարվեցին, քանզի ձեռնարկությունը պարապուրդի է մատնված: «Երկխոսությունն ավելի արդյունավետ փուլ կտեղափոխվի, եթե ձեռնարկությունը վերսկսի գործել», - վերստին կրկնեց Դ.Ռազունովը՝ հավելելով, որ ամեն ինչ արվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի շրջանակում ու նաեւ զանգվածային հեռացումներ չեն լինի, ինչի մասին խոսակցություններ են տարածվել:

Մայիսի 30-ի առավոտյան կոմբինատի աշխատակիցները դարձյալ աշխատանքի դուրս չէին եկել, իսկ ահա հացադուլավորները նախօրեին ժամը 22-ին, դադարեցրել էին

հացադուլը: Ինչպես տեղեկացանք նախաձեռնող խմբից, իրենք պատրաստվում են կրկին հանդիպել «Պոլիմետալի» ղեկավարության հետ:

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կապանի ԼԳԿ» ՓԲԸ-ն հայտնում է, որ աշխատանքային կոլեկտիվի ներկայացուցիչների հետ բանակցությունները տվել են դրական արդյունք. ձեռք բերված պայմանավորվածության համաձայն 30.05.2018թ., ժամը 16.00-ից վերսկսվել է ընկերության 25.05.2018թ. ժամանակավորապես ընդհատված արտադրական գործունեությունը, 29.05.2018թ. դադարեցվել է աշխատավարձի բարձրացման պահանջով մի քանի աշխատողների 28.05.2018թ. հայտարարած հացադուլը:

տարարած հացադուլը:

Ընկերությունը բանակցությունների արդյունքում պատրաստակամություն է հայտնել 2018թ. հուլիսի 1-ից 10%-ով բարձրացնելու բոլոր աշխատողների աշխատավարձերը: Ի լրումն դրա՝ 31.05.2018թ. սկսած աշխատանքներ կտարվեն ընկերության եւ աշխատողների միջեւ 27.12.2016թ. կնքված կոլեկտիվ պայմանագրով սահմանված կարգով աշխատանքային կոլեկտիվի նոր խորհրդի ձեւավորման ուղղությամբ: Ձեւավորված խորհուրդն անհապաղ ձեռնամուխ կլինի աշխատանքի եւ վարձատրության պայմանների վերաբերյալ աշխատողների վերաբերյալ աշխատողների բարձրացրած այլ հարցերի լուծմանը:

Ընկերությունը պարտավորվել է նաեւ 28.05.2018թ. Շահումյանի հանքում հացադուլ հայտարարած

աշխատակիցներին պատասխանատվության չենթարկել ընկերության ներքին կանոնակարգերի եւ տեխնիկական անվտանգության կանոնների խախտման համար, ինչպես նաեւ աշխատանքից ազատումը որպես կարգապահական տույժ չկիրառել 25.05.2018թ. մինչեւ 30.05.2018թ. աշխատանքի դուրս չեկած աշխատակիցների նկատմամբ:

Ընկերությունը վստահ է, որ աշխատանքային խորհրդի ձեւաչափով աշխատանքը կամրապնդի ղեկավարության եւ աշխատողների միջեւ փոխըմբռնումը եւ ապագայում արդյունավետ հարթակ կապահովի հարցերի կառուցողական ընթացքում եւ լուծման համար:

«Կապանի ԼԳԿ» ՓԲԸ
30.05.2018թ.

Թանգարանների գիշերը Գորիսում

«Գերհաղորդակցվող թանգարաններ» կարգախոսով անցկացվող «Թանգարանների գիշեր» միջոցառմանը, հակառակ վերջին տարիների պասիվության, ակտիվ ծրագրով էր հանդես եկել Գորիսի երկրագիտական թանգարանը:

Ուշագրավ էր հատկապես մասնավոր հավաքածուների եւ հին լուսանկարների ցուցադրությունը՝ Գորիսի եւ գորիսեցիների առնչվող: Ընդ որում՝ լուսանկարների մի մասն արված էր 19-րդ դարավերջին:

Այցելուները հետաքրքրությամբ էին ծանոթանում Գորիսի Գ. Պարոնյանի անվան արվեստի դպրոցի (տնօրեն՝ Սիլվա Ասատրյան) աշակերտների ստեղծագործությունների ցուցահանդեսին, որտեղ ներկայացված էին ոչ միայն գեղանկարներ, այլև խեցեգործական իրեր:

Մայիսի 19-ի երեկոյան Սերո Խանգոյանի տուն-թանգարանը Գորիսի հանրությանն էր ներկայացել նոր ցուցամուշ-ներով:

Վերջին ամիսներին տուն-թանգարան են տեղափոխվել գրողի բազմաթիվ անձնական իրեր: Դա հատկապես իրագործվել է Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանի եւ գրողի քրոջ տիկին Վերժինեի հոգածությամբ:

Տուն-թանգարանում վերջնական հանգրվան է գտել գրողի ավագ որդու, այլևս լուսահոգի Արարատ Խանգոյանի գեղանկարներից մի քանիսը:

Թանգարանի վարիչ Արմանուշ Բակունցը տեղեկացրեց, որ համայնքապետի նախաձեռնությամբ եւ ԳՂ մշակույթի նախարարության հոգածությամբ ավարտվել է տուն-թանգարանի ցուցադրության պլանի կազմումը, որի համաձայն ցուցադրությունը կկազմակերպվի մինչև ամառ:

Տուն-թանգարան էին այցելել նաեւ գրադարանային ոլորտի աշխատողներ, հայ գրականության մասնագետներ: Գորիսի Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Գոհար Սկրտչյանը «Այունյաց երկիր» լրագրողի հետ զրույցում մասնավորապես ասաց, որ դպրոցականների շրջանում մեծանում է Սերո Խանգոյանի



գրական ժառանգության հանդեպ հետաքրքրությունը: Երեխաները հաճույքով են ընթերցում հատկապես «Մխիթար Սպարապետ», «Թագուհին հայոց» պատմավեպերը, ինչպես եւ պատմվածքները:

Պատմավեպի հանդեպ աճող հետաքրքրությունն է պատճառը, որ մայիսի 21-ին տուն-թանգարանում կկազմակերպվի «Գրականության եւ հատկապես պատմավեպասա-

նության դերը հայոց պետականության հաստատման գործում» թեմայով:

Արմանուշ Բակունցը հույս հայտնեց, որ 2015-2016-ին վերանորոգված տուն-թանգարանի պաշտոնական բացումը տեղի կունենա ընթացիկ տարում:

«Թանգարանների գիշեր» ծրագիրը, ինչպես միշտ, յուրովի է կազմակերպվում Ակսել Բակունցի տուն-թանգարանում:

Թանգարանի բակում բացվեց Ժիրայր Մարտիրոսյանի հերթական (2-րդ) ծառաքանդակը «Ջանգեզուրյան տարագրվ կինը»:

Թանգարանի բակում Գորիսի պատկերասրահի ֆոնդային նկարների, նաեւ Գ. Իգիթյանի անվան գեղարվեստի կենտրոնի աշակերտների ստեղծագործությունների ցուցահանդես էր:

Լայն էկրանի վրա ցուցադրվում էին «Բակունցյան օրեր» գորիսյան ավանդական տոնակատարության արխիվի տեսանյութերը:

Մութ ընկնելու հետ մեկտեղ տուն-թանգարանի այգում՝ հիմնված հայ մեծագույն արձակագրի ծնողների կողմից, կազմակերպվել է թեյախմություն, որը նույնպես ավանդական միջոցառում է թանգարանների գիշերվա ընթացքում:

Թանգարանի վարիչ Վարդան Սարգսյանը տեղեկացրեց, որ միջոցառումների շարքը տուն-թանգարանում մեկնարկել է երեկ՝ մայիսի 18-ին, թանգարանների միջազգային օրը, որին ներկա էր նոտ 250 այցելու:

«Այունյաց երկիր» խմբագրությանը հանձնվեց տուն-թանգարանի հիմնադիր-տնօրեն, լուսահոգի Քաջիկ Դորունցի «Վերադարձի վայելք» վերտառությամբ բանաստեղծությունների հետմահու ժողովածուն, որ լույս է տեսել օրերս՝ 6 տպագրական մամուլ ծավալով:

«Այունյաց երկիր» խմբագրությանը հանձնվեց նաեւ Վարուն Ժան Գալստյանի բանաստեղծությունների նոր ժողովածուն՝ «Երկնող ժամանակի հանգրվանը»:

«Այունյաց երկիր»
19 մայիսի 2018թ.

Ամբողջ ժողովրդին ներկայացնող պատգամավոր Ավետ Սարգսյանին հրավիրում ենք հարցազրույցի՝ իրեն մանդատով օժտած ժողովրդի համար



Ամբողջ ժողովրդին ներկայացնող պատգամավոր Ավետ Սարգսյանին հրավիրում ենք հարցազրույցի՝ իրեն մանդատով օժտած ժողովրդի համար

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունն Ազգային ժողովի պատգամավորին առնչվող շատ հստակ եւ ամենը մի հողված ունի՝ «Պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով եւ համոզմունքներով» (Հոդված 94):

Հիմա՝ թիվ 12 ընտրատարածքի սիրելի պատգամավոր Ավետ Սարգսյանը երկու ան-

գամ դեմ է քվեարկել Հայաստանի Հանրապետության վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանին:

Եվ, ինչպես Սահմանադրությունն է թույլատրում, պատգամավորն առաջնորդվել է իր խղճով ու համոզմունքով: Ասել է թե՛ իր գործն է, քվեարկել է այնպես, ինչպես կամեցել է: Բայց... Սահմանադրության նույն հողվածն է նախեսառաջ ասում է՝ «Պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին...»:

Հետեւաբար՝ մենք՝ ընտրողներս, իրավունք ունենք իմանալ, թե Հայաստանի օրենսդիր մարմնում մեզ ներկայացնող Ավետ Սարգսյանի խղճի եւ համոզմունքների համար

ի՞նչ կունկրես հանգամանքներ են հիմք ծառայել երկրի ղեկավարի ընտրության ժամանակ:

Հարցը պարզաբանելու եւ լուսաբանելու համար «Այունյաց երկիրը» պատգամավոր Ավետ Սարգսյանին հրավիրում է հարցազրույցի, որին ուղիղ հեռարձակմամբ հետեւելու հնարավորություն կտրվի syuniacyerkir.am կայքով:

Հարցազրույցը կվարի Սամվել Ալեքսանյանը:

Հանդիպման օրվա, ժամի եւ վայրի վերաբերյալ պատրաստ ենք ընդունել (առանց քննարկման) Ավետ Սարգսյանի առաջարկությունը, ինչի մասին նախապես տեղյակ կպահենք մեր ընթերցողներին:

Մենք ունենք տասը օր ժամանակ՝ Սպասում ենք...

«Այունյաց երկիր»

«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն

առաջարկում է հեփեյալ թափուր աշխատատեղ՝

1. Տեխնասարկման կետի ենթափոխի պետ (հանքի սպասարկման բաժին)
2. Ծանր տեխնիկայի մեխանիկ
3. Բացահանքի մեխանիկ
4. Թարգմանիչ
5. Հանքի ավագ մասնագետ
6. Նախագծող ինժեներ (հանքի տեխնիկական ծառայությունների բաժին)
7. Քիմիկ
8. Էլեկտրիկ
9. Վերահսկիչ-չափիչ սարքերի մասնագետ
10. Կույտային տարրավազման հրապարակի ինժեներ Աղսորբջիոն դետորբջիոն վերականգնման / ջարդիչ կայան / եռակցման գծով մեխանիկ
11. Պլանավորող (վերամշակման գործարան)
12. Եռակցող / ջարդիչ կայան /
13. Մետալուրգ
14. Ավտոմատ սարքավորումների տեխնիկական մասնագետ



Գործատուն ապահովում է մասնագիտական դասընթացներ, կայուն աշխատանք՝ կայուն աշխատավարձով: Աշխատանքի համար խնդրում ենք ուղարկել ձեր կենսագրությունը hr@lydianinternational.co.uk էլեկտրոնային հասցեին: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել՝ +37443 404 802, 404 801 Հայտարարության վերջնաժամկետը՝ հուլիսի 1, 2018թ.

1918թ. մայիսյան հերոսամարտերում հաղթանակի եւ հայաստանի հանրապետության հռչակման պատմական խորհուրդը

Էջ 5 Վերջինիս անվան տակ թուրքերը նկատի ունեին հատկապես Անդրանիկի ջոկատը: Այս հանգամանքը դժգոհություն առաջացրեց Անդրանիկի մոտ, եւ նա հեռացավ Ջանգեզուր: Այսպիսի ծանր պայմաններում 12 հազ. քառ. կմ-ի վրա ծնվեց հանրապետությունը, որը, սակայն, աստիճանաբար ամրապնդվեց եւ ուժեղացավ: 1918թ. մայիսի 28-ին հանրապետության հռչակումից հետո առաջնահերթ խնդիրներից մեկը իշխանության մարմինների ստեղծումն էր: Սկզբում իշխանության ժամանակավոր գործառնությունները իրականացնում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որը, թուրքերի կողմից ճանապարհներին հարուցած արգելքների պատճառով (երկաթուղին թուրքերի ձեռքին էր), ինչպես եւ այլ հանգամանքների բերումով, չէր կարողանում վրաստանից տեղափոխվել Երևան: Հայաստանում իշխանության ղեկը շարունակում էր մնալ Երևանի ազգային խորհրդի ձեռքում՝ Արամ Մանուկյանի ղեկավարությամբ: Վերջինս հսկայական գործ կատարեց Երևանում պետականության հռչակումը նախապատրաստելու եւ նորաստեղծ պետությունն ամրապնդելու ուղղությամբ: Պատահական չէ, որ Արամը իրավամբ համարվում է հայոց պետականության վերականգնման հեղինակը: Նրա ղեկավարած Հատուկ կոմիտեն մինչեւ հուլիսի կեսերը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ժամանումը Երևան, Հայաստանում իրականացրեց ժամանակավոր կառավարության գործառնությունը: 1918թ. հուլիսի 19-ին Ազգային խորհուրդը վերջապես ժամանեց Երևան: Ազգային խորհուրդների (Թիֆլիսի, Երևանի) եւ քաղաքական կուսակցությունների համաձայնությամբ կազմվեց իշխանության բարձրագույն մարմին՝ Հայաստանի

խորհուրդ (պառլամենտ, խորհրդարան), որի մեջ մտան ազգային խորհուրդների, տարբեր կուսակցությունների, անկուսակցականների, ազգային փոքրամասնությունների (եզդիներ, ռուսներ, մահմեդականներ) ներկայացուցիչներ, ընդամենը՝ 46 հոգի (18ը՝ դաշնակցականներ): Հուլիսի 24-ին հրապարակվեց կառավարության կազմը. վարչապետ՝ ճարտարապետ Հովհ. Քաջազնունի (1868-1937), ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան (1879-1919), արտգործնախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարճիկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան եւ արդարադատության նախարար՝ Գրիգոր Տեր-Պետրոսյան: Օգոստոսի 1-ին Երևանում հանդիսավորությամբ բացվեց հայոց առաջին պառլամենտի՝ խորհրդի (խորհրդարանի) առաջին նստաշրջանը: Խորհրդի նախագահ ընտրվեց Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ): Նստաշրջանը որոշում ընդունեց երկիրը ծանրագույն վիճակից դուրս բերելու ուղղությամբ շտապօրոշ քայլեր ձեռնարկելու մասին: Մինչեւ հիմնական օրերի՝ սահմանադրության ընդունումը, որոշվեց ժամանակավորապես առաջնորդվել ցարական Ռուսաստանի «Հավաք օրինաց» (օրենքների ժողովածու) օրենքների ժողովածուով: Մինչեւ տարեվերջ բարելավվեց դատական գործը: Ստեղծվեց երկրյալ ատենակալների դատարան: 1919թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանն ընդունեց մի կարեւոր որոշում՝ հայոց լեզուն պետական ճանաչելու մասին: Գործավարությունը բոլոր հիմնարկներում այսուհետեւ կատարվելու էր հայերենով: Ընդունվեց պետական դրոշը՝ եռագույնը, որը պետք է բարձրացվեր պետական, կառավարական հիմնարկների վրա:

Եռագույնի կարմիրը խորհրդանշում էր հայ ժողովրդի թափած արյունը, երկնագույնը՝ ազատագրված հայրենիքի բաց երկինքը, նարնջագույնը՝ աշխատանքը (հողի գույնը): Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի եւ նկարիչ Հակոբ Կոչոյանի ներկայացրած հանրապետության զինանշանը՝ դրոշակի օրինակով ընդունվեց ժամանակավորապես: Չինանշանի վրա երկու Մասիսների շուրջ հին հայկական արքայատոհմների (Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց եւ Ռուբինյան) զինանշաններն էին, աջ եւ ձախ կողմերում արծվի եւ առյուծի պատկերներ էին, ներքեւում՝ սուրը, գրիչը, հասկերը: Հանրապետությունում իբրեւ պետական հիմն գործածվում էր «Մեր հայրենիքը»: Սահմանվեցին շքանշաններ, տոներ: «Հայրենիքին ծառայության համար», «Վարդան զորավար» եւ այլ շքանշաններ ունենալու մասին որոշումներ ընդունվեցին: Հանրապետության կառավարությունը մեծ ուշադրություն դարձրեց բանակի ամրապնդման հարցին: Հին բանակը, որի կորիզը հայկական կորպուսն էր, այլևս չէր համապատասխանում ժամանակի ոգուն, ուստի կազմաօրոշվեց եւ նոր՝ 20-25 տարեկանների զորահավաքի հիման վրա կազմվեց հայկական դիվիզիան՝ Մովսես Արիկյանի հրամանատարությամբ: Մինչեւ 1920թ. բանակի թիվը 10 գնդերում հասավ 25 հազարի: Սեւանում հիմք դրվեց ռազմական նավատորմին, որի առաջնելը դարձավ «Վշտ երկաթ» ռազմանավը: Հանրապետությունում մեծ թիվ կազմող արեւմտահայ զարթուցանությունները դժգոհ էր, որ իրենց հայրենիքը՝ Արեւմտյան Հայաստանը, դուրս է մնացել կառավարության ուշադրությունից: 1918թ. հոկտեմբերի վերջին համաշխարհային պա-

տերազմում Անտանտի երկրներից Թուրքիայի կրած պարտության լուրը ոգետրություն առաջացրեց հայերի շրջանում: 1919թ. փետրվարին Երևանում կայացավ արեւմտահայ զարթուցանների համագումար, որն առաջ քաշեց «Միացյալ Հայաստան» ստեղծման գաղափարը: Համագումարը գտնում էր, որ այս հանրապետությունը պետք է կոչվել Արարատյան հանրապետություն, իսկ Հայաստանի Հանրապետությունն այն է, որը ներառում էր նաեւ Արեւմտյան Հայաստանը: Ի կենսագործումն այդ պատմական խնդրի՝ միացյալ Հայաստանի ստեղծման, անկախության տարեդարձի օրը՝ մայիսի 28-ին կառավարությունը, որն արդեն գլխավորում էր Ալ. Խատիսյանը, Հայաստանը հռչակեց «Միացյալ, ազատ հանրապետություն»: Դրանով կառավարությունն իրեն համարում էր նաեւ Արեւմտյան Հայաստանի տերը, եւ Հայաստանը հռչակվում էր միասնական պետություն: 1919թ. հունիսի վերջին անցկացվեցին ընտրություններ՝ 366 հազ. ընտրողների, քաղաքական 7 կուսակցությունների մասնակցությամբ: Խորհրդարանի 80 անդամներից 72-ը դաշնակցականներ էին: 1919թ. օգոստոսի 1-ին բացվեց նորընտիր խորհրդարանը, որը հաստատեց նոր կառավարության կազմը վարչապետ Ալ. Խատիսյանի ղեկավարությամբ: Հանրապետության ամրապնդման գործընթացը շարունակվեց: Հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ ինչպես հարեւան, այնպես էլ հեռավոր երկրների հետ: 1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սեր քաղաքում համաշխարհային պատերազմում հաղթանակած Անտանտի երկրների եւ պարտված Օսմանյան Թուրքիայի միջեւ կնքված դաշնագրով Հայաստանի Հանրապետությանը պետք

է միացվել շուրջ 90 հազ. քառ. կմ տարածք Արեւմտյան Հայաստանի՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգներից, որով հայոց պետության տարածքը կազմելու էր մոտավորապես 160 հազ. քառ. կմ: Ասկայն խորհրդաքեմալական համագործակցության հետեւանքով այս ծրագիրը ի չիք դարձավ: 1920թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի եւ դեկտեմբերի 2-ին խորհրդայնացման հետեւանքով կործանվեց Հայաստանի Առաջին հանրապետությունը: Պետականության մոտ երկուսուկես տարվա կարճատե ընթացքում հայ ժողովուրդն ունեցավ լուրջ առաջընթաց: Երկարատե ընդմիջումից հետո վերականգնվեց հայոց պետականությունը, սկսվեց հայրենադարձություն, ստեղծվեցին իշխանության մարմիններ, բավականին ուժեղ բանակ, հաստատվեց ժամանակի համար կառավարման ժողովրդավարական համակարգ, մարդկանց մեջ վերականգնվեց պետականության զգացումն ու զգացողությունը: Թեւ ընկավ հանրապետությունը, սակայն նրա գոյությունն անհետեւանք չմնաց: Նրա հիմքի վրա բուլշեիկները պարտավորված ստեղծեցին նոր հանրապետություն՝ Խորհրդային Հայաստանը, որի 70-ամյա պատմության ընթացքում հայ ժողովուրդն ապրեց տնտեսական ու մշակութային մեծ վերելք: Փաստորեն առաջին հանրապետության հենքի վրա, թեւ վարչաքաղաքական միայնազամայն այլ համակարգի պայմաններում ստեղծված խորհրդային Հայաստանն էլ հող նախապատրաստեց երրորդ, անկախ հանրապետության ձեւավորման համար: Այս է 100-ամյա հեռավորությունից 1918թ. մայիսյան հերոսամարտերի ու անկախ պետականության հռչակման պատմական մեծ խորհուրդը:

ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՄԱՆ ՄՐՅՈՒՅԹ ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գորիսի պետական համալսարանը հայտարարում է մրցույթ

- Հայոց լեզու եւ գրականության,
- Պատմության,
- Իրավագիտության,
- Տնտեսագիտության եւ կառավարման,
- Կենսաբանության եւ քիմիայի,
- Մաթեմատիկայի եւ ինֆորմատիկայի
- էլեկտրոնիկայի եւ էլեկտրատեխնիկայի ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների զբաղեցման համար:

Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին կարող են մասնակցել դոկտորի (պրոֆեսորի) գիտական աստիճան (կոչում) կամ գիտությունների թեկնածուի (դոցենտի) գիտական աստիճան(կոչում) ունեցող անձինք: Ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնող թեկնածուի տարիքը, որպես կանոն, չպետք է գերազանցի 65-ը:

Հավակնորդները Գորիսի պետական համալսարանի աշխատակազմի կառավարման բաժին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- դիմում համալսարանի ռեկտորի անունով,



- կադրերի հաշվառման թերթիկ,
- քաղվածք աշխատանքային գրքուկից,
- ինքնակենսագրություն,
- գիտական աստիճանը եւ գիտական կոչումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ հաստատված սահմանված կարգով,
- տպագրված գիտական եւ ուսումնամեթոդական աշխատանքների ցուցակը,
- տվյալներ պարզեատրումների, մրցանակների եւ պատվավոր կոչումների վերաբերյալ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ սույն թվականի հունիսի 25-ը:

Մասնաամասն տեղեկությունների համար դիմել Գորիսի պետական համալսարանի գիտական քարտուղար Թ.Մարությանին:

**Հասցեն՝ ք. Գորիս, Ավանգարդ 4:
Ֆեռ. (093) 00-31-03
(098) 19-67-07**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆՓՈՒԿ ՊՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍՍՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Ֆեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Ռճթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01U 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ՕՍԼՈՒՑՈՒՄ» բաժնուժ տպագրվող նյութերի համար Ստորագրված է տպագրության չի կրում:

QR-ԿՈՂ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 30.05.2018թ.: